դժվարության առաջացման պատճառներից մեկն այն է, որ ինչպես պետական համալսարանը, այնպես և գրականության ինստիտուտը շուրջ երկու ատասնամյակի ընթացքում արժանի խորությամբ չեն մշակում հայ հին գրականության և հատկապես գրական պրոզայի ուսումնասիրության կարևոր հարցերը և չեն տալիս համապատասխան տրակյալ կադրեր։ Մյուս կողմից մեծ թերություն պետք է համարել այն, որ մեր պարբերականներում անբավարար է զարգանում պատմագրական բնագավառում լույս տեսնող գրքերը։ Ընդ. Հովհաննիսյանը մատնանշեց նաև այն, որ անհրաժեշտ է պարզել գրականության ինստիտուտի մամուլի սեկտորի պրոֆիլը, հաշվի առնելով հայ մամուլի մատակարարած հարուստ նյութերի կարևորությունը և այն, որ այդտեղ են կենտրոնացած XIX և XX դարերի հայ հասարակական և քննադատական մտքի պատմության կարևոր աղբյուրները։

Մաշտոցի անվան մատենադարանի դիրեկտոր, ակադեմիայի թղթակից-անդամ, դոկտոր Լ. Խաչիկյանի ելույթը նվիրված էր գիտահետազոտական ինստիտուտների աշխատանքները կոորդինացնելու, հայ գաղութների մշակութային արխիվներն ուսումնասիրելու, ակադեմիայի սիստեմի բոլոր ինստիտուտներում գտնվող միկրոֆիլմերը համատեղ օգտագործելու հարցերին։

Ժողովի մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին փիլիսոփայության և իրավունքի սեկտորի վարիչ, ՀՍՍՌ գիտության վաստակավոր գործիչ Հ. Գ. Ասլանյանի «Բուրժուական պատմափիլիսոփայության սնանկացումը» և պատմական գիտությունների դոկտոր Բ. Ն. Առաքելյանի «Արմավիրի պեղումների նշանակությունը հայ մշակույթի ուսումնասիրության համար» թեմաներով զեկուցումները։

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

Տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի գիտական նստաշրջան՝ նվիրված ռուսական տպագրության 400-ամյակին։

Գիտական նստաշրջանում բացման խոսքով հանդես եկավ ՀՍՍՌ ԳԱ պրեզիդենտ՝ ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

— Տպագրության արվեստը,— նշեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը,— միշտ բարձր են գնահատել բոլոր ժողովուրդները։ Ահա թե ինչու ամենևին էլ զարմանալի չէ, որ այսօր նշելով ռուսական տպագրության 400-ամյակը, առանձնակի հաղթանդամով ենք վերաբերվում առաջին ռուսական տպագրիչների պատմական կարևոր դերի ու վաստակի բնութագրմանը, մեծ ուշադրությամբ ուսումնասիրում անցյալի տպագրիչների տեխնիկան և բազմազան հրատարակությունների փորձը, գնահատում ժողովրդի կուլտուրական վերելքի համար նրանց ձեռնարկած ջանքերն ու աշխատանքը։

Անհրաժեշտ է նշել 19-րդ դարում և մեր օրերին տպագրված նոր գրքերի բարձր տեխնիկան, բազմազան գրքերի հատկանիշները ու գիտական ուղղությունը, Ժողովրդի հետ սերտորեն կապված առաջավոր գրողների ու գիտնականների դերը, ինչպես նաև նորանոր ընթերցողների ստվարածավալ շարքերի աճը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո անսահման չափով ավելացել է գրողների, ընթերցողների թիվը, բարձրացել նրանց ակտիվությունը, փոխվել է տպագրություն ու հրատարակությունների ուղղությունը։ Գիրն ու գրականությունը կարևոր դեր են կատարում ժողովուրդների եղբայրության, կոմունիստական լուսավոր հասարակության կառուցման, խաղաղության ամրապնդման գործում։

Այնուհետև կարդացվեցին զեկուցումներ։ «Ռուսական տպագրության 400-ամյակը» թեմայով զեկուցեց ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանը*, «Ռուսաստանի առաջին հայկական տպարանները» թեմային էր նվիրված բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ս. Բարայանի զեկուցումը։

Գիտական նստաշրջանի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ դիտեցին ռուսական տպագրության նվիրված գրքի ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին ռուսական գրքի լավագույն նմուշները։

---

* Ակադեմիկոս Ա. Բ. Կարինյանի զեկուցումը տե՛ս «Տեղեկագրի» այս համարում։

* * *

Մարտի 16-ին գիտությունների ակադեմիայի փոքր դահլիճում տեղի ունեցավ Փիլիսոփայության և իրավունքի սեկտորի հաշվետու-գիտական նստաշրջանը, որը ներածական խոսքով բացեց սեկտորի վարիչ Հ. Ասլանյանը։

Նստաշրջանում լսվեցին երեք զեկուցումներ։ Ավագ գիտաշխատող Լևոն Աբրահամյանը «Լեզվական նշանի բնույթը» թեմայով իր զեկուցման մեջ նշեց, որ նշանային սիստեմների ուսումնասիրության հետ կապված իմացաբանական հարցերը վերջին տասնամյակում գրավում են փիլիսոփաների ուշադրությունը։ Ընդ որում, իդեալիստական փիլիսոփայության մեջ տենդենց կա նշաններն ու նշանների սիստեմներն առանձնացնելու՝ իբրև մի «հատուկ թագավորություն»՝ մեկուսացած ինչպես իրերի, այնպես էլ իդեաների աշխարհից։ Այդ տեսակետն անհիմն է և հանգեցնում է ագնոստիկական եզրակացությունների։ Զեկուցողը համոզիչ չի համարում այն տեսությունները, որոնք ագնոստիցիզմին հակադրում են մի գրույթ, ըստ որի նշանի նշանակությունը օբյեկտի արտացոլումն է։ Բնութագրելով լեզվական նշանը, Լ. Աբրահամյանը զարգացրեց այն տեսակետը, որ նշանի նշանակությունը նրա յուրահատուկ հարաբերությունն է նշանակման առարկայի նկատմամբ։

Ավագ գիտաշխատող Սուրեն Ավետիսյանի զեկուցումը նվիրված էր տարածության մաթեմատիկական և փիլիսոփայական ըմբռնումների փոխհարաբերության հարցին։ Նա կանգ առավ ժամանակակից բուրժուական փիլիսոփայական մի քանի հոսանքների բնութագրման վրա, որոնք տարածության մաթեմատիկական ըմբռնումները բոլորովին կտրում են տարածության օբյեկտիվ հատկություններից և դիտում, որպես սոսկ մարդկային մտքի ազատ ստեղծագործության արդյունք։ Այդ սխալ պատկերացման իմացաբանական արմատը, նշեց զեկուցողը, հետևյալ հանգամանքն է. երկրաչափությունը, որպես մաթեմատիկական սիստեմ, իրականությանը վերաբերում է միայն այն ժամանակ, երբ տրված է մետրիկայի կոնգրուենտության սահմանումը, իսկ այդ սահմանումը բուրժուական փիլիսոփաների կողմից դիտվում է իբրև կամայական պայմանավորվածություն։ Այդ տեսակետին զեկուցողը հակադրեց կոնգրուենտության սահմանման դիալեկտիկական-մատերիալիստական ըմբռնումը, ըստ որի կոնգրուենտության սահմանումը ռեալ առարկաների տարածական հարաբերությունների որոշ կողմերի աբստրակտ արտահայտությունն է։ Այդ ամենի հիման վրա զեկուցողը բացահայտեց տարբեր երկրաչափական սիստեմներում (էվկլիդյան, Լոբաչևսկու, Ռիմանի) դրսևորվող տարածական հարաբերությունների և ընդհանրապես տարածության, որպես մատերիայի գոյության ձևի, փոխհարաբերությունը։

«Անհատի էության հարցի հակամարքսիստական խեղաթյուրումների քննադատությունը» զեկուցումով հանդես եկավ սեկտորի կրտսեր գիտաշխատող Ռազմիկ Նավասարդյանը։ Ցույց տալով անհատի հարցի ակտուալությունը կոմունիստական շինարարության ինչպես տեսության, այնպես էլ պրակտիկայի տեսակետից, նա նշեց, որ բուրժուական փիլիսոփայությունը շարունակ հարձակումներ է կատարում մարքսիզմի դեմ նաև այս հարցում։ Նա հատկապես ընդգծեց էքզիստենցիալիզմի ռեակցիոն, հակամարքսիստական ուղղվածությունը։ Էքզիստենցիալիզմը, որն ունի մթագ հումանիստական ուսմունքի հավակնություն, մարդու գոյությունը հանգեցնում է անհատի գիտակցությանը, մարդուն փաստորեն դարձնում է արտասոցիալական էակ։ Միաժամանակ էքզիստենցիալիստները պնդում են, թե իբրև մարքսիզմը չի լուծում մարդու պրոբլեմը, քանի որ մարդուն գիտում է բացառապես հասարակական զարգացման ասպեկտով։ Զեկուցողը ցույց տվեց, որ միայն մարքսիզմն է դիտականորեն լուծում մարդու մեջ անհատականի ու հասարակականի փոխհարաբերության բարդ պրոբլեմը։ Ռ. Նավասարդյանը կանգ առավ նաև կոլեկտիվիստական հարաբերությունների պայմաններում անհատի պրոբլեմի սոցիոլոգիական ուսումնասիրության մի քանի հասունացած կոնկրետ հարցերի պարզաբանման վրա։

Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց սեկտորի վարիչ, գիտության վաստակավոր գործիչ Հ. Գ. Ասլանյանը։

Վ. Ճ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

* * *

Մարտի 26—28-ը տեղի ունեցած պատմության ինստիտուտի գիտական նստաշրջանում զեկուցումներով հանդես եկան ինստիտուտի կրտսեր գիտաշխատողները։ Այդ նստաշրջանը, փաստորեն կրտսեր գիտաշխատողների մեկ տարվա կատարած գիտահետազոտական գործունեության հաշվետվություն էր, դիսերտացիաների պաշտպանության նախապատրաստության յուրահատուկ ստուգատես։

Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի փառապանծ զավակների սխրագործություններին էին նվիրված Ք. Գրիգորյանի և Լ. Մարտիրոսյանի զեկուցումները։

Ք. Գրիգորյանը, իր «Հայ ծովայինները Կովկասի համար մղված մարտերում (1942—1943 թթ.)» զեկուցման մեջ լուսաբանեց մարտանավերում և ռազմա-ծովային ավիացիայի զորամասերում իրենց անթառամ փառքով պսակած հայ ռազմիկների մարտական կյանքի հերոսական դրվագները։ Զեկուցողը հատկապես կանգ առավ ՍՍՌՄ ռազմա-ծովային ուժերի ժողովրդական կոմիսարի առաջին տեղակալ, նավատորմի ծովակալ Իվան Իսակովի (Հովհաննես Տեր-Իսահակյան), Սովետական Միության կրկնակի հերոս, «Բալթյան մրրկահավ», փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանի, Նովորոսիյսկի դեսանտային գրոհի մասնակից, պահակային կատերի հրամանատար լեյտենանտ Սահակյանի, սեծովյան փառաբանված օդաչու, էսկադրիլիայի հրամանատար Վարդանյանի և ուրիշ հայ հերոսների սխրագործությունների վրա։

«Հայաստանի առողջապահության բնագավառի կին աշխատողները հայրենական պատերազմի տարիներին» թեմայով զեկուցման մեջ Լիզա Մարտիրոսյանը բազմաթիվ փաստերով ցույց տվեց բուժաշխատող հայուհիների, հայ դուստրերի հերոսական գործունեությունն ու անձնվեր աշխատանքը ռազմաճակատում և թիկունքում։

«Արևմտահայ ազգային-ազատագրական շարժման վերելքը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո և հայ-քուրդ-ասորական դաշինքի խնդիրները» թեմայով զեկուցման մեջ Ռաֆիկ Հովհաննիսյանը նշեց, որ 1878 թ. Տաճկաստանից սկսված արտագաղթի հախուռն օրերին միայն Զեյթունն էր, որ չտարվեց գաղթով և ապստամբություն բարձրացրեց։ Զեկուցողը, վկայակոչելով ժամանակի առաջադիմական հայ գործիչներին, նշեց, որ չնայած հայ-քուրդ-ասորական դաշինքի գաղափարը վաղուց ի վեր հուզում, հրապուրում էր հայ գործիչներին, սակայն արևմտահայ ազատագրական շարժումը մեկուսացված մնաց դրացի քուրդ, ասորի, հույն ժողովուրդների ազատագրական պայքարից և չկարողացավ գտնել ազատագրական շարժման ճշմարիտ ուղին։

Ուշագրավ էր Վ. Ղազարյանի «Խ. Արովյանի գաղափարական առնչությունները Վ. Բելինսկու հետ» զեկուցումը, որտեղ փորձ արվեց ցույց տալու, որ Արովյանը լինելով Բելինսկու ժամանակակիցը, ծանոթ է եղել նրա ստեղծագործություններին ու հայացքներին։ Իր «Ֆեոդորա կամ որդիական սեր» դրամայում և 1847 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ներսես Աշտարակեցուն հասցեագրված նամակներում կրել է Բելինսկու ազդեցությունը։

Իրենց զեկուցումներում հետաքրքիր և ուշագրավ շատ հարցեր բարձրացրին ՍՍՌՄ և ժողովրդական դեմոկրատիայի երկրների սեկտորի կրտսեր գիտաշխատողներ Վ. Խաչատրյանը, Գ. Պինգիրյանը, Մ. Հովհաննիսյանը և Ժ. Անանյանը։

Տասնութերորդ դարի Աստրախանի հայերի մշակութային կյանքի պատմությանն էր նվիրված Վարդան Խաչատրյանի զեկուցումը, որտեղ արխիվային փաստաթղթերի հիման վրա նա աշխատել էր վեր հանել հայ գաղութի ներքին կյանքը, ցույց տալով, որ Աստրախանի գաղութի տնտեսական և քաղաքական կարևոր դերը պայմանավորում էր գաղութի կուլտուրական կյանքի աշխուժացումը։ Զեկուցման մեջ հետաքրքիր փաստեր կային XVIII դ. երկրորդ քառորդում Աստրախանում արդեն գործող հայկական դպրոցների, տպարանի գործունեության, տպագրության և հայերեն գրքերի տարածման մասին։

Կրտսեր գիտաշխատող Գայանե Պինդիրյանը խոսելով Լվովի հայ գաղութի հասարակական-քաղաքական շարժման պատմության մասին, միաժամանակ, լեզվաբանական համեմատությունների և արխիվային նյութերի ուսումնասիրության շնորհիվ այն եզրակացությանը հանգեց, որ Լվովի արխիվային նյութերում հիշատակված 17-րդ դ. 30-ական թվականների հասարակական գործիչ Սիմեոն Միկոլայովիչը, նույն ինքը՝ Սիմեոն դպիր Լեհացին է։ Նա հաղորդեց, որ հայտնաբերած արխիվային փաստաթղթերը նոր լույս են սփռում Սիմեոն Միկոլայովիչի հակաունիթորական շարժման մասնակցության հարցում։

Ժորես Անանյանը «Գրիգորիոպոլ քաղաքի հայկական գաղութի հասարակական կյանքի պատմությունից» զեկուցման մեջ անդրադարձավ XVIII դարի երկրորդ կեսի Գրիգորիոպոլի հայ հասարակության տնտեսական կյանքին վերաբերող երկու հարցի՝ հայկական գաղութի հողային հարցը և Գրիգորիոպոլի վաճառականների ազատ առևտրի իրավունքը։

«Լեհաստանի հայերի ինքնավարության օրգանների ֆունկցիաների հարցի շուրջը» թեմային էր նվիրված Մաուլեն Հովհաննիսյանի զեկուցումը։ Խոսելով Արևմտյան Ուկրաինայում բնակվող հայերին, դեռևս գալիցյան իշխանությունների կողմից տրված դատական ինքնավարության և

ազգային ինքնավար հիմնարկություններ ստեղծելու իրավունքի մասին, նա այն հարցն արծարծեց, որ ինքնավարության մարմինների իրավասությունները ըստ էության լինելով դատական իշխանության ձև, չեն սահմանափակվել միայն դատական բնույթի հարցերով, նրանք բացառիկ կարևոր դեր են խաղացել Լեհաստանի հայկական գաղութի նաև հասարակական-տնտեսական կյանքում։

Ուշադրությամբ լսվեց նաև Ս. Ալավերդյանի «Հայկական ՍՍՌ համատարած կոլեկտիվացման էտապի մասին» զեկուցումը։

Նստաշրջանում կարդացված յուրաքանչյուր զեկուցումից հետո տեղի ունեցավ աշխույժ և հետաքրքիր քննարկում, որտեղ ուսանելի դիտողություններով ու խորհուրդներով հանդես եկան պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Գ. Գալոյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը, պատմական գիտ. դոկտոր Ա. Հակոբյանը և պատմ. գիտ. թեկնածուներ Հ. Վարդանյանը, Վ. Ոսկանյանը, Հ. Կարապետյանը և Ա. Գրիգորյանցը։

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅ ՄԵԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Հայ ժողովրդի բազմավաստակ զավակ, հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորամանյանը իր ամբողջ կյանքը նվիրաբերել է հայ ճարտարապետությանը։ Նա գիտական ուսումնասիրությունների միջոցով լույս աշխարհ է հանել և գիտության սեփականությունը դարձրել միջնադարյան հայ ճարտարապետությունը, մարդկությանը տեսանելի դարձրել հայ ճարտարապետության գլուխգործոցը՝ Զվարթնոցը։

Հայ տաղանդավոր ճարտարապետ Թ. Թորամանյանն իր բազմաթիվ ուսումնասիրություններում բացահայտում է հայ ճարտարապետության IV—XIV դարերի զարգացման հիմնական էտապները։ Նրա տեսությունները արժանանում են ռուսական և եվրոպական շատ գիտնականների ուշադրությանը։

Մեծ գիտնականի հիշատակը հավերժացնելու նպատակով, հանրապետության գիտական, ճարտարապետական հասարակայնությունը, հայ ժողովուրդը երախտագիտության խոր զգացումներով նշեցին Թորոս Թորամանյանի ծննդյան 100-ամյակը։

Մարտի 24-ին, Երևանի ճարտարապետների տանը տեղի ունեցավ Հայաստանի կուլտուրայի մինիստրության արվեստի ինստիտուտի, ճարտարապետների միության և պետական պատմական թանգարանի միացյալ գիտական նստաշրջանը։ Հայ անվանի ճարտարապետի կյանքի ու գիտական գործունեության մասին զեկուցումներով հանդես եկան արվեստի վաստակավոր գործիչներ Մ. Մազմանյանը, Ա. Մահինյանը, պատմական գիտությունների թեկնածու Ս. Բարխուդարյանը։ Հուշերով հանդես եկավ Թորոս Թորամանյանի դուստր Ն. Թորամանյանը։

* * *

Մարտի 26-ին, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հոբելյանական երեկույթ՝ նվիրված հայ մեծ ճարտարապետ Թորոս Թորամանյանի ծննդյան 100-ամյակին։

Երեկույթը ներածական ճառով բացեց Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի շինարարության գործերի պետական կոմիտեի նախագահ Գ. Աղաբաբյանը։ Թորոս Թորամանյանի գիտական գործունեության մասին զեկուցեց Հայաստանի ճարտարապետների միության վարչության նախագահ, արվեստի վաստակավոր գործիչ Վ. Հարությունյանը։

— Թորոս Թորամանյանը,— ասաց զեկուցողը,— մի այնպիսի աշխատանք է կատարել, որը համազոր է գիտական մի ամբողջ կոլեկտիվի աշխատանքի։ Հայ խոշորագույն գիտնականը և ճարտարապետը խորացել է Հայաստանի ճարտարապետության պատմության հանգուցային հարցերի մեջ, հետազոտել ու հայտնաբերել բազմաթիվ հուշարձաններ։

Երեկույթում Թ. Թորամանյանի մասին հուշեր պատմեցին Սովետական Միության ժողովրդական նկարիչ, լենինյան մրցանակի լաուրեատ Մարտիրոս Սարյանը, արվեստի վաստակավոր գործիչ Մ. Մազմանյանը, պատմական գիտությունների դոկտոր Կ. Ղաֆադարյանը, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը։